

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԼՅՈՒԴՎԻԳ ՀՈՎԱԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

«ԵՐԿՐՈՐԴ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ» ԼՈՒՍԱՎՈՐ ՀԵՏԱԳԻԾԸ Ներսես Շնորհալու ուսուցողական-խրատական ստեղծագործությունները

«Այս Ներսեսը իմաստությամբ ավելի մեծ էր, քան իր ժամանակի բազում վարդապետներ և ոչ միայն Հայոց, այլև հույների ու ասորիների մեջ, այնքան, որ նրա իմաստության համբավը տարածվեց բոլոր ազգերի մեջ»¹. 13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցու գնահատականն է այն ժամանակներում, երբ Հայոց Հայրապետի, մեծ բանաստեղծի, ակնավոր մատենագրի մահից ընդամենը մի քանի տասնամյակ էր անցել, և Շնորհալու հիշատակը դեռ թարմ էր ժողովրդի սրտում: «Ընտիր և արդարև գերընտիր, միանգամայն և իսկաշնորհ և բազմաշնորհ մի գրվածք»։ Աստվածաշնչի չափածո վերաշարադրանքի՝ Շնորհալու «Հիսուս Որդին» պոեմի մասին գրել է Ղևոնդ Ալիշանը, որ նրան անվանել է նաև «հրաշագարդ և անուշակ հայրն մեր Շնորհալի»²:

Մանուկ Աբեղյանն էլ գնահատանքի բարձր խոսքերով է արտահայտել իր հիացմունքը. նա Հայոց Եկեղեցու մեծ հայրերից է, իսկապես բազմակողմանի բնատուր ձիրքով օժտված բանաստեղծ-երաժիշտ, շնորհալի մի անձ ոչ միայն իր բազմազան գրական ընդունակությամբ, այլև իր կյանքով: Ուստի և նրա անվան հետ անբաժան մնացել է Շնորհալի մականունը...

Մեր բանաստեղծությունը 12-րդ դարի կեսին արդեն երկնքից իջել էր երկիր և դարձել կյանքի ու բնության գեղեցիկ արտացոլումը ոչ միայն իր ընդհանուր էության, այլև բովանդակության մանրամասներով, ինչպես և բնական ու պարզ ձևով, շնորհալի քերթողի փափուկ, տրտմական կամ լուրջ հույզերով և անուշ, սրտաշարժ շեշտերով, որոնց ստեղծողը բնավ չէր դիմում արվեստակյալ պերճության ու փայլի, ավելորդ զարդարանքների: Ամեն ինչ թեթև ու ճաշակով, անբռնազբոս ու կենդանի»³:

Օտարագգի հայագետները նույնպես հիացական խոսքերով են բնութագրել Ներսես Շնորհալուն: Բելգիացի հայագետ Ֆ. Նկլը գրել է, որ Շնորհալին «լինելով եռանդուն և բեղմնավոր հեղինակ, մեծ համբավ է թողել արձակում ու չափածոյում, այլև երաժշտության մեջ», և որ նա, ստեղծագործելով գրական ամենատարբեր ձևերով ու տեսակներով, «մի շարք ուղղություններով առաջ է մղել հայ մատենագրությունը, հատկապես բանաստեղծական արվեստը»⁴: Իսկ գերմանացի հայագետ Կ. Նեյմանը «Հիսուս Որդի» պոեմը համարել է «հոգևոր բանաստեղծության մի իսկական գլուխ-

¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Եր., 1961, էջ 118:

² Ղևոնդ Ալիշան, Շնորհալի եւ պարագա յիւր, Վենետիկ, 1873, էջ 499:

³ Մանուկ Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հ. 2, Եր., 1946, էջ 80:

⁴ Նույն տեղում, էջ 256:

գործոց»։ Ռուս անվանի բանաստեղծ Վալերի Բրյուսովը նույնպես բարձր է գնահատել Շնորհալու ստեղծագործությունները՝ նշելով, որ դրանցից շատերի «գուգահեռները պետք է փնտրել XIX դարում...»⁵։

*Առաւօտ լուսոյ,
Արեգակն արդար,
Առ իս լոյս ծագեա...*

Եվ հնչում, դարեր ի վեր հնչում է արևի ու լուսի այս հանրահայտ օրհներգը՝ հյուսված նրա հանճարեղ արարողի՝ Ներսես Շնորհալու ձեռամբ։ Այդպես քանի՜-քանի՜ օրհներգ, հայրենախոս քանի՜-քանի՜ շարական.

*Նորահրաշ պսակավոր և առաքինիների գորագլուխ,
Հոգով զինավառվեցիր, արիաբար՝ ընդդեմ մահի,
Վարդա՛ն, քաջ նահատա՛կ, որ զարկեցիր թշնամուն,
Վարդագույն արյամբ քո պսակեցիր Եկեղեցին։*

Աշխարհաբար թարգմանված «Նորահրաշ պսակավոր» շարականից է՝ ձոնված Ավարայրի քաջարի մարտիկներին ու Մեծն Վարդան գորավարին՝ հյուսված հայրենասիրական ոգեղեն տարերքով, գեղեցկահունչ մակդիր-համեմատություններով։ Ու այսպես էլի քանի՜-քանի՜ հրաշալի տող ու գանձ, չափածո պատմություն ու պատմական ողբ, ներքող ու ուղերձ, սրտահույզ աղոթք ու հոգևոր երգ, բանաստեղծական գլուխգործոց պոեմներ՝ «Վիպասանություն»՝ հայոց անցյալի հերոսական դրվագները փառաբանող պատմագրական չափածո մի ասք, «Բան հավատո»՝ այբուբենի տառերով հյուսված Հին ու Նոր կտակարանների հակիրճ շարադրանք, «Հիսուս Որդի» կամ «Ողբերգություն վիպասական»՝ 4000 նույնահանգ տողերից և երեք մասից բաղկացած քնարական երկ՝ Աստվածաշնչին և քրիստոնեական հավատքի նվիրյալներին ձոնված մի զարմանալի պատմություն, և վերջապես «Ողբ Եդեսիո»՝ հայրենաշունչ ողբերգ-պոեմը՝ Միջագետքի և Եդեսիա հայոց քաղաքի (Ուռհայի)՝ արաբ հրոսակների կողմից ավերակվելու պատմական փաստի գեղարվեստական մի հանճարեղ անդրադարձ, Մանուկ Աբեղյանի խոսքերով՝ «հայ գրականության երկրորդ հրաշակերտությունը՝ Նարեկից հետո»։ Ավերված Եդեսիա քաղաքը բանաստեղծը անձնավորել է թշնամու դեմ մղված մարտերում զոհված զավակներին սգացող մոր կերպարանքով։ Փառավոր անցյալի հիշատակները վերապրող մայրը անիծում է ոսոխներին և վրիժառության կոչնակներ է հնչեցնում։ Լուսավոր անցյալի և մոայլաշուք ներկայի հակադրությունը Շնորհալին ներկայացնում է սքանչելի բնաբույս պատկերներով, բնության խոր զգացողությամբ, առանց այլաբանական շղարշների.

*Բնձնից կյանքի ջուր էր բխում,
Զվարթաճաղիկ բույսեր ծնում,
Գետերի պես վտակ հոսում,
Բուրաստանները ոռոգում։
...Իմ ծոցում ծովն էր ծածանվում,
Քաղցրիկ օդով էր ծիծաղում։
...Առավոտյան ցողն էր իջնում,*

⁵ Նույն տեղում։

Ոսկենման շողն էր փայլում:

Եղեսիա-եղերամայրը սգում է ոչ միայն իր, այլև հայոց ավերակված մյուս քաղաքների, քաղաքամայր Անիի կործանումը՝ խնդրելով. «մասնակից եղիր ձայնիս և սփոփիչ տարակույսիս».

Քանզի առաջ դու էլ էիր

Վայելուչ հարս մի քողածածկ,

Մերձավորին՝ շատ ցանկալի,

Հեռավորին՝ փափագելի...

Պատմա-հայրենասիրական այս ողբերգը, այնուամենայնիվ, ավարտվում է հավատի ու հուսոյ հնչերանգներով. եղերամայրը հավատում է, որ քրիստոնյա բարեկամների աջակցությամբ կհաղթեն թշնամիներին, և հայրենի հողը կրկին կվերածնվի ավերակներից...

«Ողբ Եղեսիո» պոեմը դարեր շարունակ եղել է մանկապատանեկան ընթերցանության շրջանակներում և նպաստել հայոց դպրատների սաների, ընդհանրապես հայ երեխաների հայրենասիրական դաստիարակությանը: Բայց ահա երկու ժանրերով Շնորհալու ստեղծագործությունները հասցեագրված են հենց մանուկներին, ժանրեր, որ վերը նշված մի քանի այլ գրական տեսակների հետ հայ բանաստեղծությունում «հայտնվել» են նրա ջանքերով: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է չափածո խրատի և «առակքի» (ավելի ճիշտ՝ հանելուկի) ժանրերին: Չափածո խրատի ժանրով ստեղծագործությունները համարյա ամբողջապես («Խրատ ուսումնականաց մանկանց»), իսկ հանելուկները՝ մեծով մասամբ գրված են երեխաների համար: Այսուհետ ավելի հանգամանորեն մենք կանդրադառնանք հենց այս երկու ժանրերով ստեղծագործություններին, որոնք Շնորհալու անունը անխզելիորեն կապում են հայ մանկագրության ակունքներին: Եվ, ուրեմն, առանց նսեմացնելու Խաչատուր Աբովյանի դերը՝ արդարացի կլինի, որ հենց Ներսես Շնորհալուն համարենք հայ մանկագրության նախակարապետը, դրանով իսկ ոչ արհեստականորեն մանկական գրականության սկզբնավորումը իրապես «ետ տանենք» 12-րդ դար: «Շնորհալին փաստորեն մեր առաջին մանկագիրն է, մանկավարժական ուսուցողական բանաստեղծության հիմնադիրը», - հատկապես նկատի ունենալով «Խրատ ուսումնականաց մանկանց» չափածո խրատանին՝ հավաստում են 9-րդ դասարանի «Հայ գրականություն» դասագրքի հեղինակներ Հենրիկ Բախչինյանն ու Սերգեյ Սարինյանը⁶: «Խրատ ուսումնականաց մանկանցը»... գրված է բացարձակապես երեխաների համար, որը, որպես այդպիսին, առաջին գործն է մեր մանկական գրականության պատմության մեջ», - իր «Ներսես Շնորհալի» աշխատությունում շեշտում է Գրիգոր Հակոբյանը⁷: Առաջին անգամ իր մանկավարժական գրվածքներով մեր գրականության մեջ երևում է առաջին հայ մանկավարժ-բանաստեղծը, որն իր մի շարք բովանդակալից և հանրամատչելի գրվածքներով հիմք է դնում մեր մանկական գրականությանը»:

Ներսես Շնորհալու ավանդը հայ մանկագրության մեջ բարձր են գնահատել նաև ի-

⁶ Հ. Բախչինյան, Ս. Սարինյան, Հայ գրականություն, դասագիրք 9-րդ դասարանի համար, Եր., 1996, էջ 113:

⁷ Գր. Հակոբյան, Ներսես Շնորհալի, Եր., 1964, էջ 157:

րենք՝ հայ մանկապատանեկան գրականության գիտակաները՝ Խաժակ Գյուլնազարյանը, Սոֆյա Լալախանյանը և ուրիշներ: Նրանք «Խրատ ուսումնականաց մանկանց» խրատանին, հարյուրավոր հանելուկները համարել են հայ մանկանց սերունդներին դարերով կրթող ու դաստիարակող ստեղծագործություններ, աշխարհաճանաչողության գորեղ աղբյուրներ, միաժամանակ՝ «հիմք ու ակունք հայ մանկագրության հետագա զարգացման ճանապարհին»:

Եվ, իրոք, Շնորհալին ստեղծել է չափածո խրատների երկու շարք՝ հայոց այբուբենի տառերի անձնավորումով: Յուրաքանչյուր շարքը բաղկացած է 36 տներից, ութատող քառատող համամասնությամբ: Եթե ութատողերը հիմնականում հասցեագրված են բոլոր ընթերցողներին՝ առանց տարիքի սահմանափակման, ապա քառատողերի հասցեատերերը երեխաներն են, թեև այլափասակ ընթերցողներն էլ դրանցից կարող են բարոյակրթական «դասեր քաղել»: «Խրատ ուսումնականաց մանկանց» չափածո խրատանին գրելիս Շնորհալին հետապնդել է մանկավարժական-ուսումնադաստիարակչական նպատակներ, որոնց իրականացումը կյանքի աշխարհականացման, վերածնության այդ ժամանակներում որոշիչ դեր էր խաղալու՝ «զարգացնել մարդու զգացմունքները, միտքը և կամքը՝ տալով դրանց ցանկալի ուղղություն՝ ազգին և երկրին օգտակար լինելու համար»: Դեռևս իր «Բան հավատո» քերթվածում՝ այբուբենի տառերով հյուսված քառյակներում, քրիստոնեական հավատքի ու դավանանքի փառաբանությամբ նա հետապնդել է գործնական-ուսուցողական նպատակներ՝ կարևորելով գիտելիքների, իմաստության դերը մարդու, այդ թվում՝ մանկանց կյանքում: Պոեմի փոքրիկ վերջաբանում Շնորհալին ընդգծում է, թե ում համար և ինչ նպատակով է այն գրել.

*Նորոգ, մանկունք իմաստութեան,
Տըւաք գայս բան ձեզ խրախութեան,
Երկնաւորացըն գիտութեան,
Եւ համայնից եղելութեան՝⁸:*

Իսկ ահա «Խրատ ուսումնականաց մանկանցը» նրա մանկավարժական ծրագրի բանաստեղծական հիմնավոր արտահայտությունն է՝ մայրենի լեզվի, տվյալ դեպքում՝ հայոց այբուբենի ուսուցմանը զուգընթաց միաժամանակ լուծել բարոյակրթական-դաստիարակչական խնդիրներ՝ հաշվի առնելով, իհարկե, ոչ միայն ժամանակի պահանջները, այլև մանուկների տարիքային առանձնահատկությունները, հոգեբանությունն ու մտածողության երանգները: Բայց գլխավոր նպատակը նույնն է՝ երեխաների մեջ սեր արթնացնել ուսման, գիտելիքների, մարդկային մնայուն արժեքների հանդեպ, նրանց դաստիարակել աշխատասիրության, հայրենասիրության, առաքինության, ժամանակի հասարակության բարքերում և հարաբերություններում տեղ գտած արատներից զերծ մնալու և բարոյական այլ հատկություններով տոգորվելու ոգով: Ինչպես Մանուկ Աբեղյանն է ընդգծում, «դա իսկապես մի մանկավարժական գրվածք է, որով թե այբբենն է կարգով սովորեցնում, թե միաժամանակ բարոյակրթական խրատներ է տալիս մանուկներին, հորդորում սիրել ուսումն ու գիտությունը»: Ամեն մի քառյակը սկսվում է այբուբենի համապատասխան տառով և բովանդակում է մի կարևոր խրատ՝

⁸ Ներսես Շնորհալի, Բան չափաւ, Վենետիկ, 1928, էջ 344:

մատուցված մատչելի, հետաքրքրաշարժ հյուսվածքով: Այդ խրատներից յուրաքանչյուրը մի ուսանելի դաս է.

*Ե՛կ բեր, մանուկ, գունկըսն քո յիս,
Լուր և անսա իմում բանիս,
Միրեա գուսումն, որով պատուիս,
Ի յերկնայնոցն և ի յերկրիս...*

Այս խրատով Շնորհալի ուսուցիչը երեխային հրավիրում է «դասարան» և ի սկզբանե ավանդում, որ գիտությունը ոսկուց ավելի պատվական գանձ է (Խրատ Գ).

*Գիմըն գանձ է քեզ բիւր բարի,
Գրելով զիմաստս ի տախտակի,
Ձնա արկ ի քոյդ պարանոցի,
Որ պատուական է քան զոսկի⁹:*

Եվ «Դ» տառով սկսվող խրատն էլ «Բաց է անում» գիտության և իմաստության տաճարի դռները, որտեղից մանուկները պետք է ներս մտնեն.

*Դայն դուռն բանայ քեզ գիտութեան,
Ըզտաճարին իմաստութեան,
Ուսմամբ գրրոց զըւարճանալ,
Իմաստութեամբ ուրախանալ...*

Ահա և «Զ»-ով սկսվող խրատը.

*Զայն զարթուցանէ ըզքեզ, մանուկ,
Զայնիւ հընչմամբ որպէս թըմբուկ,
Մի յուսմանէ լինիր տաղտուկ,
Զի մի տաս վայ անձինդ յատուկ:*

Շնորհալին իր խրատներում ընդգծում է, որ ուսումը հեշտ գործ չէ, որ գիտելիքները ձեռք են բերվում համառ աշխատանքով, որ այդ ճանապարհին պետք է համբերությամբ ու տոկունությամբ հաղթահարել դժվարությունները կամ, ինչպես ինքն է համեմատում՝ ոսկին քուրայում «ծեծելով» է մաքրվում, իսկ մանուկը.

*Ժուժկալ լինել, ասէ, յուսումն,
Թէն ապտակ առնուս յարբումն,
Հայեաց յոսկին՝ յոր ի քրայումն,
Զի ծեծելով առնի զմաքրումն:*

Ահա այսպես շարունակվում են մանկավարժ-բանաստեղծի ուսուցողական դասերը, որոնք խրատից խրատ իրենց բովանդակության մեջ ներառում են նոր երանգներ՝ գիտելիքների նկատմամբ սիրո հորդորներից անցում կատարելով բուն գիտելիքների ուսուցմանը՝ կյանքում նմանվել իմաստուն, բարի, առաքինի, աշխատասեր մարդկանց, սիրել գիրքը, ընթերցանությունը, պարզել գիտության առեղծվածները, գիտություն, որ նա համեմատում է ծովի հետ, որով կարող ես նավարկել «հոգու առագաստով».

Ծովու նման, ասէ, զիմաստ,

⁹ Նույն տեղում, էջ 370:

*Որ ի յերկնից իջեալ է աստ.
Բայց ըզհոգւոյ քո յառագաստ՝
Ծըծել մըտօքըդ լեր պատրաստ:*

Շնորհալին երեխայի ուշադրությունը սևեռում է նաև ժամանակի բարքերի վրա, նրան հորդորում հեռու մնալ մոլորություններից, մարդկային արատներից՝ լինի ծուլություն թե որկրամոլություն, հարբեցողություն թե շատախոսություն կամ անտեղի վիճաբանություն:

Մի շարք քառատողեր և ութնյակներ էլ շեշտադրված սոցիալական բնույթ ունեն: Բանաստեղծը նշավակում է ազահությունը, հարստության ետևից ընկնելը, միմյանց ատելը, գողությունը, կյանքի արատավոր այլ երևույթները, սուտն ու կեղծիքը մարդկային հարաբերություններում: Ահա «2» տառի խրատը.

*Չայն չար ասէ զազահութիւն,
Զի շատ մեղաց է ծնելիութիւն,
Զի ի նմանէ է սպանութիւն,
Նա է աւար և գերութիւն,
Անտի սկսեալ է գողութիւն
Եւ անիրաւ դատողութիւն,
Ի յայնմանէ վաշխառութիւն,
Եւ ըզմիմեանս ատելութիւն¹⁰:*

Իսկ ահա «Թ»-ն քաղաքական խնդիր է շոշափում և խրատն այս անգամ հասցեագրվում է վերին իշխանավորներին: Եթե մի շարք խրատներում նա մարդկանց խորհուրդ է տալիս լինել պարկեշտ, քաղաքավարի ու կիրթ, վարքով «քաղցր ու հեզ», նաև՝ հարգանք ունենալ իշխանությունների հանդեպ, ապա այս խրատում նա խոսքն ուղղում է հենց նրանց և հանդիմանում, որ նրանք էլ պետք է փոխադարձորեն հարգեն քաղաքացիներին և լինեն արդարացի.

*Թոյն՝ թագ, ասէ, արքունական
Կամ պետութիւն իշխանական,
Թէ ընկալցիս դու ըզմարդկան,
Մի՛ համարիր քեզ սեփհական,
Այլ ըստ հարանց քոց, որ անցան,
Ծանիր ըզքեզ ծաղկի նըման.
Եւ մի՛ լինիր ամբարտաւան,
Այլ քաղցր և հեզ խոնարհական:*

Իսկ «Խրատ ուսումնականաց մանկանց» խրատանու վերջում բանաստեղծն ավանդում է ամենակարևոր դասերից մեկը՝ լինել բարեմիտ, մարդասեր.

*Յոյն ցածուն, ասէ, խոնարհամիտ,
Լեր առ ընկերն և բարեմիտ.
Եւ ոչ հըպարտ բարուք և բիրտ,
Թէ և շընորհ ունիս յոգիդ:*

¹⁰ Նույն տեղում, էջ 362:

Շնորհալին իր խրատանիով, ըստ էության, առաջադրում է մի յուրատեսակ տեսական-գործնական ծրագիր, որ պետք է ընկած լինի մանուկների կրթությանն ու դաստիարակությանը միտված յուրաքանչյուր գրքի, այդ թվում՝ գեղարվեստական գրականության, առավել ևս՝ երեխաներին հասցեագրված գրականության հիմքում: Մենք չենք բացառում, որ հող հայրենիի, մայրենի լեզվի հանդեպ «հայոց նորահաս երիտասարդների» հոգին ու միտքը զորացնող աբովյանական սիրո ջահը թեժացել է հենց Շնորհալու վառած կանթեղներից, և «Նախաշավիղ կրթության», «Զվարճալի և կարճ պատմությունք», «Պատմություն Տիգրանի կամ Բարոյական խրատներ հայ մանուկների համար» մանկավարժական երկերի ակունքները նաև Շնորհալու «Խրատ ուսումնականաց մանկանց» խրատանու մեջ պետք է փնտրել: Այնպես որ Ներսես Շնորհալի-Խաչատուր Աբովյան հինգդարյա բաժանարար կամուրջը, ըստ էության, նաև ակունքարմատներով հայոց երկու մեծերին նույն գաղափարների շուրջ միավորող ծիածան է:

* * *

Ներսես Շնորհալի մանկավարժ-բանաստեղծը խրատանուն զուգահեռ և ի լրումն հայ մանկանց ուսանելու-դաստիարակելու իր նպատակալաց ծրագրի գրել է ավելի քան 300 հանելուկ, որ նա կոչել է «առակք», բայց դրանք ոչ թե առակներ են ժամանակակից իմաստով, այդ ժանրի իրական բովանդակությամբ, այլ չափածո հանելուկներ՝ ժողովրդական բանահյուսության մշակումներ կամ ինքնուրույն հյուսվածքներ:

Իհարկե, մինչ Շնորհալին նույնպես մեր գրականության մեջ այս ժանրի ստեղծագործություններ հորինվել են, բայց դրանք ազատ ոտանավորի կառուցվածք են ունեցել «տաբբեր չափ ու կշռությամբ», իսկ ահա «Շնորհալին ստեղծեց դրա դասական տեսակը, որ այնուհետև դարձավ ընդօրինակման առարկա... Ինչպես առհասարակ, մանկական գրականության այս բնագավառում ևս նա հետևորդներ ունեցավ...» (Արշակ Մադոյան)¹¹: Անշուշտ, այդ հետևորդների թվում են ոչ միայն հետագա դարերում հանելուկի ժանրով ստեղծագործող գրողները, այլև 20-րդ դարի մեր մանկագրության երևելիները, որոնցից շատերը նաև հայոց այբուբենի տառերով բազմաթիվ հանելուկներ են գրել (Գուրգեն Գաբրիելյան, Սուրեն Մուրադյան, Նանսեն Միքայելյան, Յուրի Սահակյան և ուրիշներ):

Ներսես Շնորհալու հանելուկները Մանուկ Աբեղյանն անվանում է «փոքրիկ բանաստեղծություններ՝ լի ճշգրիտ իրականությամբ», և որ նա՝ Շնորհալին, գրականության մեջ մտցրել է մի նոր տեսակ ևս՝ «առակք վասն ուրախութիւն մարդկան», թեև, ըստ ակնավոր գրականագետի, ինչպես առակների, այնպես էլ ժողովրդական հանելուկների նպատակն է ոչ այնքան ուրախացնել մարդկանց, որքան զվարճալի, հետաքրքրաշարժ եղանակով սովորեցնել և սրամտություն զարգացնել, ուշադրություն սևեռել բնության երևույթների, իրերի, մարդկային բարքերի, հարաբերությունների վրա¹²: Իհարկե, այդ հանելուկների նյութը զգալի չափով վերաբերում է հոգևոր անձեռին և հասկացություններին (դրախտ, ապաշխարանք, աբեղա, Կայեն, Դավիթ և այլք), ինչպես և մեր ժողովրդի պատմությանը, նշանավոր դեմքերին, դիցաբանական հերոս-

¹¹ Հայ մշակույթի նշանավոր գործիչները, Եր., 1976, էջ 261:

¹² **Մանուկ Աբեղյան**, Հայոց հին գրականության պատմություն, հ. 2, Եր., 1946, էջ 94:

ներին (Վարազդատ, Տրդատ, Տորք Անգեղ և այլն), բայց ավելի շատ են այն հանելուկները, որոնց բովանդակությունը բնության երևույթներն են՝ արեգակ, երկինք, գարուն, ամառ, ձյուն, ծառ, խնձոր, ցորեն, թթենի, կենդանիներն ու թռչունները (ագռավ, այծ, կաքավ, մեղու, բզեզ...), իրերն ու գրենական պիտույքները (գիրք, թուղթ, սանր...), որ ներկայացվում են քառատողերով, հակիրճ, պարզ հյուսվածքով, տվյալ երևույթի, առարկայի կամ կենդանու բնորոշ գծերով, զվարճալի-հումորային տարերքով, դիպուկ համեմատություններով, այլաբանական ենթատեքստով: Իհարկե, հանելուկները ինչ-որ առումով նաև առակային երանգ ունեն և, քանի որ դրանք ժողովրդական բանահյուսության ծնունդ են, ժողովուրդն այդ «առակքում» փոխաբերական-այլաբանական իմաստով առաջադրել է կյանքի, բնության երևույթներին և կամ շրջապատող աշխարհին վերաբերող որևէ խնդիր, որ ենթակա է գուշակման և կամ այն անհրաժեշտ է լուծել: Այս առումով հանելուկների ուսուցողական-ճանաչողական արժեքին համադրվում է նաև գործնականը, ժամանակին ու մարդկանց հուզող հարցերի արծարծման լուծման գաղափարը: «Հայ ժողովրդական անգիր բանահյուսության հարուստ գանձարանից է վերցրել Շնորհալին հանելուկների նյութը, մշակել և գրի առել,- շեշտում է Գրիգոր Հակոբյանը:- Հայ միջնադարյան գեղարվեստական գրականության մեջ առաջին անգամ որպես գրական նոր տեսակ Շնորհալու ձեռքով են մուտք գործել մեր գրավոր հանելուկները, որոնք վկայում են, թե նա որքան լավ է ճանաչել իրական կյանքը, թափանցել նրա խորքերը և գեղարվեստորեն այն վերարտադրել: Միայն նյութը չէ, որ ժողովրդական է, ժողովրդական են և պատկերները, մտածողության և երևակայության ձևերը, ոճական առանձնահատկությունները, լեզուն ու շարահյուսությունը»¹³: Եվ Արշակ Մադոյանն էլ ընդգծում է, որ «պարզ, բանահյուսական երկի կառուցիկությամբ աչքի ընկնող իր հանելուկները Շնորհալին գրել է ժողովրդական-խոսակցական լեզվով՝ միջին հայերենով, որ հետագայում դարձավ հայ քնարերգության լեզուն»¹⁴: Առանձին հանելուկներ գրված են հին հայերենով՝ գրաբարով:

Ասացինք, որ Շնորհալու հանելուկները հասցեագրված են ամեն տարիքի ընթերցողներին, իսկ զգալի մասը՝ հատկապես մանուկներին: Խաժակ Գյուլնազարյանը նշում է, որ «Շնորհալին իր հանելուկները չի հասցեագրել հատկապես մանուկներին, և դա հասկանալի է: Շնորհալու ժամանակ հանելուկը նոր ձևավորված գրական տեսակ էր (չնայած դրա արմատները թաղված էին դարերի խորքում) և հենվում էր ժողովրդական բանավոր ստեղծագործության վրա, որը ողջ ժողովրդի ազատ ժամերի սիրելի զբաղմունքն էր»¹⁵: Մեր կարծիքով, ելակետ ունենալով Շնորհալի-մանկավարժի առանձնահատուկ վերաբերմունքը մանուկների ուսուցման և դաստիարակության խնդիրների նկատմամբ (վկա՝ «Խրատք ուսումնականաց մանկանցը»), չենք կարող չհաստատել, որ հանելուկների զգալի մասը հենց մանկական հասցեագրում ունեն, և դրանք բնականորեն ներհյուսվում են նրա ուսուցողական-ճանաչողական-դաստիարակչական համակարգին: Ի վերջո, խնդիրը ապացուցման կարիք համարյա թե չունի: Ինքը՝ Շնորհալին է դա ապացուցել իր հանելուկների զգալի մասի «մանկականությամբ»:

¹³ Գր. Հակոբյան, Ներսես Շնորհալի, Եր., 1964, էջ 154:

¹⁴ Ներսես Շնորհալի, Հանելուկներ, Եր., 1984, էջ 4/առաջաբանից/:

¹⁵ Խաժակ Գյուլնազարյան, Ակնարկներ հայ մանկական գրականության պատմության, Եր., 1960, էջ 31:

յամբ»՝ պարզ, մատչելի, հետաքրքրաշարժ, երեխայի մտածողությանն ու հոգեբանությանը ներդաշնակ հյուսվածքով, հատկանիշներ, որ բնորոշ են մանուկներին հասցեագրված գրականությանն ընդհանրապես: Հապա ունկնդրենք աշխարհաբար փոխադրված մի քանի հանելուկ՝ «գուտ մանկական» հյուսվածքով, ուսուցողական-ճանաչողական ընդգծված բովանդակությամբ.

*Ծնվում է ու մեծանում
Հենց նույն օրն էլ մահանում,
Հետո նորից կյանք առած
Պայծառ շորեր է հագնում:*

Դե՛, իհարկե, արևն է:

*Ամբողջ օրը քուն չունի,
Լայն դաշտերում տուն չունի,
Ծաղկից ծաղիկ է թռչում,
Փեթակ ունի, քուն չունի:*

Ամեն մի փոքրիկ էլ կարող է գուշակել, որ խոսքը մեղվի մասին է:

Ահա և գարնանը նվիրված գեղանկար հանելուկը: Այդ հիմա է, որ թվում է, թե նման գարնանաշունչ բանաստեղծական հյուսվածք ունկնդրել ենք հազար անգամ՝ մեր դասական մանկագիրներից մինչև նորերը: Բայց, ախր, այս տողերը գրվել են հեռավոր 12-րդ դարում.

*Մանուկն եկավ պայծառ, անգին,
Կանաչ շորեր ունի հագին,
Թողեց հետքեր նա ամենուր,
Ծաղկով լցրեց դաշտ ու այգին:*

Ահա և գետը՝ իր «հայտնի» նշաններով.

*Մի օձ կա մեծ, գույնը՝ կապույտ,
Հա՛ գնում է պտույտ-պտույտ,
Նրանով են սնվում անվերջ
Ծառ ու ծաղիկ, խոտ ու առվույտ:*

Ահա և գրքին նվիրված հանելուկը.

*Տուն է սպիտակ, լայնատարած,
Սև հավիկներ մեջը թառած,
Խոսում են ու զրույց անում՝
Մարդու նման լեզու առած:*

Այսպես կարելի է տասնյակ հանելուկներ մեջբերել՝ հասու տարբեր տարիքի երեխաներին, որոնց հատկապես հոգեմոտ են թերևս բնության երևույթներին և կենդանիներին նվիրված հանելուկները:

Ամեն հանելուկ ուսուցողական-ճանաչողական մի դաս է. բնության երևույթներն ու առարկաները, կենդանիներն ու թռչունները այդ հանելուկներում ներկայանում են ոչ միայն իրենց բնորոշ գծերով, այլև «բնավորությամբ». գայլը ագահ է, հափշտակիչ, ծիտը՝ ձրիակեր, աղվեսը՝ խորամանկ, խոզը՝ ծանրամարմին և կեղտոտ, մեղուն՝ աշխատասեր, և այսպես՝ տասնյակ հանելուկներ՝ երեխայի մտքի և հոգու հետ «խոսող»,

բնության, շրջապատող աշխարհի մասին նրա գիտելիքների շրջանակներն ընդլայնող ներուժով: Հանելուկների մի մասն էլ ընդգծված հայրենասիրական լիցք ունի, ներկայացվում են հայ ժողովրդի պատմության առանձին դրվագներ, դիցաբանական հերոսներ, հայոց արքաներ ու պատմական դեմքեր, նրանց ուժի, քաջության, հայրենի հողին նվիրվածության փառաբանությամբ: Շնորհալու այս շարքի հանելուկները ակունքվել են ոչ միայն ժողովրդական բանահյուսությունից, այլև Մովսես Խորենացու, Եղիշեի, Փավստոս Բուզանդի, Ղազար Փարպեցու և մյուս պատմիչների երկերից: Ահա մեկերկու նման հանելուկներ: Շնորհալին այսպես է ներկայացնում առասպելական Տորք Անգեղին.

*Մանուկ մի կայր ի Հայք գովան,
Քան ըզՄամիսոն այլ յաղթական,
Վեմ մի վերոյց մեծ տրամական,
Ի ծովն ընկեց, կանգնեաց արձան:*

Վարազդատ արքան էլ այսպես է ներկայացվում.

*Մանուկ մի այլ ի յայս նրման,
Էր ի յազգէն Արշակունեան,
Հանչաք մանուկ էր ու իշխան,
Եւ Եփրատ վազեաց քայլ մի լրման...*

Իհարկե, հայրենախոս այս հանելուկների «հերոսներին» գուշակելու համար կրտսեր տարիքի երեխաները պետք է տիրապետեն համապատասխան գիտելիքների, որին և նպատակաուղղում է հոգևորական բանաստեղծ-մանկավարժը, մեծ հայրենասերը և ազգի ու Եկեղեցու նվիրյալը, որ հպարտության վեհ զգացումով հայտարարում է այդ մասին.

*Քան զամենայն ազգ այլ ի վեր,
Ազգ մի գիտեմ հաւսար քաջեր...*

Իր ժողովուրդն է և իր ժողովրդի հանճարեղ զավակը՝ Ներսես Շնորհալին, որ ահա քանի՜ դար ապրում է սերունդների սրտում ու այսպես կշարունակի հավերժության ճանապարհը՝ իր ստեղծած մնայուն արժեքներով, իր բնաբուխ, լուսածին երգերով.

*Առաւօտ լուսոյ,
Արեգա՛կն արդար
Առ իս լոյս ծագեա՛...*